Քաղաքականության փաստաթղթի մշակման ուղեցույց

Արմեն Գրիգորյան

Երևան 2022

Գ 888 **Քաղաքականության փաստաթղթի մշակման ուղեցույց** / *Ա. Գրիգորյան.-*

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022.- 56 էջ:

Խմբագրումը՝ *Ազնիվ Նասլյանի*

Սրբագրումը՝ *Անժելա Ավագյանի*

Էջադրումը և շապիկի ձևավորումը՝ *Լուսինե Դավթյանի*

Ուղեցույցը մշակվել է իրավաբանական գիտությունների թեկնածու Արմեն Գրիգորյանի կողմից «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթում արտահայտված գաղափարները միայն Արմեն Գրիգորյանինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, ԱՄՆ ՄԶԳ-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սույն ուղեցույցը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ Քաղաքացիական հասարակություն (ՔՀ) թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Քննադատական մտածողություն (ՔՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ՀՏԴ 32
ԳՄԴ 66

ISBN 978-9939-896-48-9 © Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022

Բովանդակություն

Ներածություն 6

1. Քաղաքականության փաստաթուղթ 8

1.1. «Քաղաքականության փաստաթուղթ» հասկացությունը 8

1.2. Քաղաքականության փաստաթղթի տեսակները և բաղադրիչները 11

2. Քաղաքականության փաստաթղթի կառուցվածքը 13

2.1. Վերնագիր 13

2.2. Բովանդակություն 16

2.3. Համառոտ շարադրանք և սեղմագիր 18

2.4. Ներածություն 20

2.5. Հիմնական տեքստ 23

2.5.1. Խնդրի մանրամասն ներկայացում 24

2.5.2. Խնդրի լուծման տարբերակների ներկայացում 26

2.5.3. Խնդրի լուծման տարբերակների գնահատում և լավագույն տարբերակի ընտրություն 29

2.6. Եզրակացություններ և առաջարկություններ 36

2.6.1. Եզրակացություններ 36

2.6.2. Առաջարկություններ 38

2.7. Հավելվածներ 39

2.8. Գրականություն 40

Վերջաբան 41

Օգտագործված աղբյուրներ 43

Abstract 44

Ներածություն

Ձեռնարկը քաղաքականության փաստաթղթի **մշակման ուղեցույց** է, որում քննարկվում են քաղաքականության փաստաթղթի **օրինակելի կառուցվածքը և բովանդակությունը**: Այն կարող է օգտակար լինել քաղաքականության մշակմամբ և դրա բարեփոխմամբ զբաղվող գիտահետազոտողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքական որոշումներ կայացնողների համար:

Ուղեցույցը մատչելի լեզվով և ձևաչափով ներկայացնում է քաղաքականության փաստաթղթի **հիմնական տարրերին ներկայացվող պահանջները**: Բացատրում է քաղաքականության փաստաթղթի **մշակման կանոնները**, որոնք այն դարձնում են առավելագույնս **համակողմանի, ինքնաբավ և տրամաբանական.** շեշտադրվում են քաղաքականության փաստաթղթերի ինչպես **գիտականության** բաղադրիչը, այնպես էլ քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար դրանց **գրավչությունը**:

Բաժիններում առանձին-առանձին անդրադարձ է արվում քաղաքականության փաստաթղթի **հիմնական տարրերի** (վերնագիր, բովանդակություն, համառոտ շարադրանք և սեղմագիր, ներածություն, հիմնական տեքստ, խնդրի մանրամասն

ներկայացում, խնդրի լուծման տարբերակների ներկայացում (այլընտրանքներ), խնդրի լուծման տարբերակների գնահատում և լավագույն տարբերակի ընտրություն և եզրակացություններ ու առաջարկություններ) **արդյունավետ ձևակերպմանը**, դիտարկվում են դրանց մշակման ժամանակ թույլ տրվող **սխալներն ու դրանցից խուսափելու եղանակները**:

Զեռնարկի վերը նշված բաժիններում, ըստ քաղաքականության փաստաթղթի տարրերի նկատմամբ կիրառելիության, առանցքային նշանակություն է տրվում **«արդյունավետ գրավոր խոսքին»**՝ որպես բարձրարժեք փաստաթղթի մշակման սկզբունքի: Ընդգծվում են գրավոր խոսքում առավել հաճախ հանդիպող **բացթողումները**:

Զեռնարկը **մատչելի**՝ «ի՞նչ ու ինչպե՞ս անել» և «ի՞նչ ու ինչպե՞ս չանել» ձևաչափով ներկայացնում է քաղաքականության փաստաթղթի մշակման **քայլ առ քայլ սկզբունքներն** ըստ փուլերի: Ի վերջո, ըստ կիրառելիության, հաշվի են առնվում **հայաստանյան իրականության** առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են թե՛ հասարակության և թե՛ քաղաքականություն մշակողների՝ խնդիրների ընկալման և լուծման մոտեցումներով:

1. Քաղաքականության փաստաթուղթ

1.1. «Քաղաքականության փաստաթուղթ» հասկացությունը

Ինչ է քաղաքականության փաստաթուղթը

Քաղաքականության փաստաթուղթը որևէ խնդրի վերաբերյալ փաստերի վրա հիմնված վերլուծությունների, եզրակացությունների և առաջարկությունների ամբողջություն է, որը պետական մարմնին առաջարկում է գործողություններ՝ որպես այդ խնդրի լուծման լավագույն տարբերակ:

Քաղաքականության փաստաթուղթ գրելու համար անհրաժեշտ է.

1. Ընտրել խնդիրը, որը ցանկանում եք լուծել:
2. Հասկանալ խնդրի պատճառները:
3. Առաջարկել խնդրի լուծումը:

Խնդրի ընտրություն: Խնդիրը այն անցանկալի բացասական վիճակն է, որը պետք է վերացնել կամ մեղմել[1]: Այն պետք է լինի բարդ և հրատապ լուծում պահանջող: Դուք պետք է կարողանաք Ձեր քաղաքականության փաստաթղթի հասցեատիրոջը համոզել, որ խնդիրն անհապաղ քայլեր է պահանջում: Կարևոր է, որ խնդիրը լինի ոչ թե միջանկյալ կամ ածանցյալ, այլ՝ հիմնարար: Այսինքն՝ չպետք է լինի հետևանք մեկ այլ՝ «մայր» խնդրի կամ

1 A Practical Guide for Policy Analysis: Eightfold Path to More Effective Problem Solving, Fourth Edition / Eugene Bardach, CQ Press, 2012, էջեր 21-22, 25-26

«մայր» խնդրի մի փոքր մասը: Անկասկած, կարող են լինել որոշ միջանկյալ կամ ածանցյալ խնդիրներ, որոնք ևս հրատապ լուծում պահանջեն, բայց հիմնարար խնդիրը թիրախավորելով՝ փոքր խնդիրներն ավելի հեշտ և արագ կլուծվեն[2]: Ցանկացած խնդիր բացասաբար է ազդում մարդկանց վրա, և որպեսզի քաղաքականության փաստաթղթի հասցեատերը համոզվի, որ անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել՝ իր տեսանկյունից «որոշակի խմբի մարդկանց» վիճակը բարելավելու համար, Դուք պետք է ցույց տաք նրան, որ պետության չմիջամտելու դեպքում այդ վիճակը հետագայում, ամենայն հավանականությամբ, ավելի կվատթարանա: Օրինակ՝ եթե Դուք ուզում եք ուսումնասիրել թմրանյութերի պատճառով անչափահասների մահացության խնդիրը, ապա այն Ձեզ կտանի դեպի թմրամիջոցների օգտագործման (ներառյալ՝ անչափահասների շրջանում) խնդիրը: Այսինքն՝ Դուք պիտի շարժվեք հակառակ ուղղությամբ՝ «մայր» խնդրի վրա կենտրոնանալու համար. **անչափահասների մահացություն թմրամիջոցներից** (բացասական վիճակ) >**թմրամիջոցների շրջանառություն (ներառյալ՝ անչափահասների շրջանում)** >**թմրամիջոցների օգտագործում (ներառյալ՝ անչափահասների շրջանում)**: Եթե գտնեք անչափահասներին թմրամիջոցների օգտագործումից զերծ պահելու ճանապարհը, Դուք կկանխեք նաև թմրամիջոցների գործածման հետևանքով նրանց մահվան դեպքերը:

Խնդրի պատճառ: Դուք ժամանակի մեծ մասը կծախսեք խնդրի պատճառները հասկանալու վրա: Այս փուլն ամենածավալունն ու ամենաբարդն է, քանի որ Ձեզնից պահանջվում են մանրակրկիտ հետազոտություններ խնդրի իրական՝ խորքային պատճառները հասկանալու համար: Ընդ որում՝ կարևոր է, որ տարբերեք խնդրի խորքային պատճառները դրա մակերեսային պատճառներից կամ խնդրի առաջացմանը նպաստող գործոններից: Խնդրի խորքային պատճառները բացահայտելու ճանապարհին անընդհատ ինքներդ Ձեզ հա՛րց տվեք՝ «ինչո՞ւ». Ձեր ցանկացած եզրահանգում կամ հետևություն ստուգեք «ինչո՞ւ» հարցով՝ «ինչո՞ւ է դա այդպես»:

---

2 Policy Papers Writer's Guide / Civil Service Commission of Israel, 2014, https://bit.ly/3CcFJiu, էջ 13, Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 141-146

Եթե հասկանաք, որ «ինչու»-ներն ավարտվել են, ուրեմն հասել եք խորքային պատճառին[3]: Ստուգելու համար հիշե՛ք, որ խնդրի խորքային պատճառ(ներ)ն այն հիմք(եր)ն է(են), պայման(ներ)ը, որի(որոնց) չլինելու դեպքում խնդիրը, այսինքն՝ բացասական անցանկալի վիճակը, կվերանա կամ էականորեն կնվազի՝ անկախ այլ պայմաններից՝ հանգամանքներից և գործոններից: Իհարկե, հնարավոր են դեպքեր, երբ կարիք լինի որոշակի գործողությունների՝ նաև խնդրի միջանկյալ պատճառները կամ դրան նպաստող գործոնները չեզոքացնելու համար: Սակայն այս դեպքում ևս առավել ճիշտ է վերացնել խորքային պատճառը: Օրինակ՝ ինչո՞ւ են անչափահասները մահանում թմրամիջոցների օգտագործումից, ինչո՞ւ են անչափահասներին հասանելի թմրամիջոցները, ինչո՞ւ են անչափահասները որոշում թմրամիջոցներ օգտագործել և ինչո՞ւ են օգտագործում: Այս դեպքում, կարծես թե, այլևս «ինչո՞ւ»-ներ չկան, և հատկապես վերջին հարցերի պատասխանները կօգնեն Ձեզ բացահայտելու խնդրի լուծման լավագույն տարբերակը:

Խնդրի լուծում: Լուծումը պետք է լինի որոշակի գործողություն կամ, ավելի ճիշտ, գործողությունների շարք, որ պետք է կատարի խնդրի լուծման համար պատասխանատու պետական մարմինը՝ խնդրի պատճառները չեզոքացնելու համար: Ձեր առաջարկած լուծումը չպետք է լինի գաղափարախոսություն, զուտ տեսական վերլուծություն կամ կարծիք, այն պետք է լինի ճշգրիտ, իրագործելի և չափելի[4]: Լուծումը պետք է առաջարկի **ճշգրիտ** քայլեր՝ ըստ ժամանակագրության և ակնկալվող անմիջական արդյունքների: Այն պետք է լինի **իրագործելի**՝ հաշվի առնելով դրա համար հատկացված ժամանակը, քաղաքական իրադրությունը, ֆինանսական միջոցները, մարդկային ռեսուրսները և հնարավոր խոչընդոտները: Ի վերջո, լուծումը պետք է լինի **չափելի**, ինչը նշանակում է, որ Դուք պետք է հստակ ցույց տաք, թե առկա անցանկալի բացասական վիճակը ինչպես, երբ և որքանով է փոխվելու դեպի դրականը:

---

3 Policy Papers Writer's Guide / Civil Service Commission of Israel, 2014, https://bit.ly/3CcFJiu, էջեր 13-14

4 Writing Effective Policy Papers – Translating Academic Knowledge into Policy Solutions / Ali G. Scotten, 2011, https://bit.ly/3vBTnKB, էջ 10

Քաղաքականության փաստաթուղթը որոշում կայացնելու գործիք է պետական մարմնի համար: Սա նշանակում է, որ այն ոչ թե զուտ տեսական, գիտական, այլ կիրառելի փաստաթուղթ է[5]:



1.2. Քաղաքականության փաստաթղթի տեսակները և բաղադրիչները

Քաղաքականության փաստաթղթերը լինում են **երկու հիմնական տեսակի՝** քաղաքականության **հետազոտություն** և քաղաքականության **վերլուծություն**[6]:

Փաստաթղթի այս երկու տեսակների էական տարբերությունները հետևյալն են.

---

5 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջ 18, Mara S. Sydney, Policy Formulation: Design and Tools, Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods / Edited by Frank Fischer, Gerald J. Miller, and Mara S. Sidney, Taylor & Francis Group, 2007, էջեր 79-87

6 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջեր 20-21

Տարբերություններ	Քաղաքականության փաստաթղթի տեսակ	
	Հետազոտություն	Վերլուծություն
Հասցեատեր	Ոլորտի մասնագետներ, այլ հետազոտողներ	Ոլորտի պատասխանատուներ
Ուղղվածություն	Խնդրին ուղղված. տալիս է խնդրի նկարագրություն և ընդհանուր բնույթի առաջարկություններ	Պատասխանատուին ուղղված. առաջարկում է իրագործման ենթակա քաղաքականություն
Լեզու (ոճ)	Խիստ մասնագիտական, տեխնիկական	Հստակ, մատչելի և պարզ
Ծավալ	Մինչև 40 էջ	Մինչև 10 էջ

Քաղաքականության փաստաթղթերը կարող են լինել նաև.

- **օբյեկտիվ,** որը նկարագրում է խնդիրը և առաջարկում դրա լուծման **հնարավոր** տարբերակները.
- **ջատագովող,** որը նկարագրում է խնդիրը և առաջարկում դրա լուծման **որոշակի, նախընտրելի** տարբերակ[7]:

Քաղաքականության փաստաթուղթը կազմված է հետևյալ մասերից.

1. վերնագիր.
2. բովանդակություն.
3. համառոտ շարադրանք և սեղմագիր.
4. ներածություն.
5. հիմնական տեքստ.
6. եզրակացություն, առաջարկություններ.
7. հավելվածներ.
8. գրականություն[8]:

2. Քաղաքականության փաստաթղթի կառուցվածքը

2.1. Վերնագիր

Վերնագիրն անմիջապես պետք է գրավի կարդացողի ուշադրությունը: Այն ինքնին կարող է առաջին իսկ վայրկյանից ստիպել հասցեատիրոջը կա՛մ հետաքրքրությամբ անցնել փաստաթղթի բովանդակության ուսումնասիրությանը, կա՛մ հակառակը՝ անվերադարձ մի կողմ դնել փաստաթուղթը:

Քաղաքականության փաստաթղթի վերնագիրը պետք է լինի.

---

7 Food Security Communication Toolkit / Food and Agricultural Organization of the United Nations, 2001, էջ 143

8 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջ 22, Tips for Writing Policy Papers / Luciana Herman, 2013, https://stanford.io/3tvGRcY, էջեր 7-9, Policy Paper Format / Joseph J. Collins, 1993, https://bit.ly/35Ho6Lv

- **Նկարագրող. ներառի քննարկվող խնդիրը, երբեմն՝ նաև լուծումը:** Քաղաքականության փաստաթղթին բնորոշ չէ ընդհանուր ձևակերպում պարունակող, խիստ տեսական-գիտական վերնագիրը: Ձեր փաստաթուղթը խնդրի և դրա լուծման մասին է, իսկ «ոչինչ չասող» վերնագիրն ի սկզբանե վանում է կարդացողին: Չէ՞ որ քաղաքականության փաստաթուղթը ոչ թե խոհափիլիսոփայական մտորումների հավաքածու է, այլ հետազոտության արդյունք-զեկույց՝ կիրառելի և իրագործելի առաջարկություններով[9]:
- **Հակիրճ. ոչ ավելի, քան 10-12 բառ:** Երկարաշունչ վերնագիրը հոգնեցնում է կարդացողին հենց առաջին պահից: Եղե՛ք հստակ և ընտրե՛ք ինքնաբավ վերնագիր, այսինքն՝ այնպիսին, որն ինքնին խոսում է՝ ցույց է տալիս Ձեր հետազոտության արդյունքի արժեքը[10]:
- **Հասկանալի. զերծ մասնագիտական բառերից (եզրույթներ) և լեզվական բարդ կառույցներից:** Եզրույթները, մասնագիտական լեզուն ընդունելի են գիտական փաստաթղթի դեպքում, իսկ քաղաքականության փաստաթուղթը, հատկապես դրա վերնագիրը հաճախ չեն ընկալվում այն կարդացողի կողմից, որը ոլորտի նեղ մասնագետը չէ:
- **Հետաքրքիր. ոչ ստանդարտ, բայց միաժամանակ առնվազն կարդալ շարունակելու ցանկություն առաջացնող:** Ցանկացած խնդրի մասին կարելի է ֆիլմ նկարել. պատկերացրե՛ք՝ Դուք եք ֆիլմի հեղինակը և պետք է վերնագիր ընտրեք, որ առավելագույն դիտումներ և շահույթ ապահովեք: Եթե ֆիլմի վերնագիրը սովորաբար 1-3 բառ է, ապա քաղաքականության փաստաթղթի դեպքում Դուք կարող եք ավելացնել ևս մի քանիսը: Պարզապես կարևոր է չչարաշահել սուր որակումները, գերադրական աստիճանի ածականները:

---

9 Writing Effective Policy Papers – Translating Academic Knowledge into Policy Solutions / Ali G. Scotten, 2011, https://bit.ly/3vBTnKB, էջ 10

10 Food Security Communication Toolkit / Food and Agricultural Organization of the United Nations, 2001, էջ 146

Վերնագրեր	
Անցանկալի ձևակերպումներ	**Ցանկալի ձևակերպումներ**
Ընտանեկան բռնության կանխարգելման վիկտիմոլոգիական ասպեկտները	Ինչպես կանանց ճիշտ պաշտպանել ընտանիքում բռնությունից. պետության անելիքները
Ներառական կրթության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	Հաշմանդամություն ունեցող երեխաները Հայաստանում կարող են ստանալ որակյալ կրթություն
Որքա՞ն պետք է շարունակվեն բանակում ոչ մարտական մահերը	Բանակում ոչ մարտական մահերի կանխումը. գործողությունների ծրագիր պաշտպանության նախարարության համար
Գյուղատնտեսությամբ զբաղվողների՝ տարիներ շարունակ լուծում չստացող խնդիրները. գյուղատնտեսության նախարարությունը հստակ չի տիրապետում իր լիազորություններին և գործիքակազմին	Պատշաճ ոռոգում, հակակարկտային կայաններ և գյուղմթերքի իրացում. հողագործների խնդիրների լուծումները
Կոռուպցիան՝ որպես տնտեսական ուզուրպացիայի լատենտ գործիք, կամ ինչպես դառնալ «խառոշի» ֆինանսապես աղքատ երկրում	Հայաստանի տնտեսության վրա կոռուպցիայի կործանարար ազդեցության չեզոքացման ճանապարհը

Առաջին սյունակի վերնագրերը բնորոշ չեն քաղաքականության փաստաթղթին: Առաջին երկու վերնագիրն, օրինակ, խիստ գիտական են և պարունակում են նեղ ոլորտային բառեր՝ «վիկտիմոլոգիական», «ներառական»: Դրանք կարող են լինել գիտական մենագրության կամ հոդվածի վերնագիր: Երրորդ և հինգերորդ վերնագրերն առավել նման են լրատվական հոդվածի սենսացիոն, զգացմունքային գլխագրերի: Ընդ որում՝ վերջինը ոչ միայն պարունակում է հասարակ կարդացողին գուցե և անհասկանալի բառեր (ուզուրպացիա, լատենտ), այլև գործածում է «խառոշի» ժարգոնային բառը. քաղաքականության փաստաթղթի դեպքում սրանցից պետք է խուսափել: Չորրորդ վերնագիրը շատ երկար է, ու թեև թվում է՝ հասկանալի է, թե ինչի մասին է, սակայն նույնպես պարունակում է բացասական-քննադատական և հուզական երանգներ: Ի վերջո, այս վերնագրերից հասկանալի չէ, թե ինչ խնդիր են շոշափում, ինչ տեսանկյունից և ինչ նպատակով:

Փոխարենը՝ երկրորդ սյունակի վերնագրերը պարզ են, հասկանալի, խոսուն և ուղղորդող, խնդրի, իսկ մի քանիսը նաև՝ լուծման մատնանշմամբ:

2.2. Բովանդակություն

Բովանդակությունը քաղաքականության փաստաթղթի քարտեզն է: Ձեր փաստաթուղթը կարդացողը պե՞տք է ունենա այդ քարտեզը: Բովանդակությունը կարդացողին պատկերացում է տալիս փաստաթղթի կառուցվածքի ու դրանում պարունակվող նյութի մասին[11]:

Եթե կարդացողը կարող է ընդամենը 5 րոպե տրամադրել Ձեր փաստաթղթին, ապա նա կնախընտրի կարդալ իր համար ամենահետաքրքիր մասը: Հետևաբար քաղաքականության փաստաթղթի բոլոր կարևոր հատվածները պետք է բաժանեք վերնագրերի և ենթավերնագրերի և պետք է համարակալեք դրանք: Սա նշանակում է, որ ինչպես վերնագրի դեպքում, փաստաթղթի բուն տեքստում ևս վերնագրերը պետք է լինեն խոսուն՝ նկարագրող: Համարակալե՛ք փաստաթուղթն ըստ կետերի

11 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջ 27

և ենթակետերի՝ «1.» վերնագիր», «1.1.» ենթավերնագիր, «1.1.1.» ենթավերնագրի բաժին տրամաբանությամբ: Օրինակ՝ եթե հետազոտել եք ապօրինի գույքի բռնագանձման խնդիրը, ապա դրա երկրորդ գլուխը (առաջին գլխում հավանաբար քննարկել եք խնդրին վերաբերող հասկացությունները, խնդրի համատեքստը) «Բովանդակություն»-ում կարող է հետևյալ տեսքն ունենալ.

2. Ապօրինի գույքի բռնագանձման մասին միջազգային-իրավական չափանիշները և լավագույն փորձը

2.1. Ապօրինի գույքի բռնագանձման մասին միջազգային-իրավական չափանիշները

2.1.1. ՄԱԿ-ի և ՏՀԿ-ի փաստաթղթեր

2.1.2. Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության փաստաթղթեր

2.2. Ապօրինի գույքի բռնագանձման լավագույն փորձը

2.2.1. Անգլիա

2.2.2. Սինգապուր

2.2.3. Հարավային Կորեա

Ինչպես տեսնում եք, վերնագիրն առանձնանում է ենթավերնագրերից, իսկ դրանք էլ, իրենց հերթին, ենթաբաժինների վերնագրերից: Այս տարբերությունը, առաջին հերթին, տեխնիկական-տեսողական է դրանց՝ միմյանց նկատմամբ դասավորվածության, տառաչափի և ընդգծումների շնորհիվ: Կարդալուց հետո պարզ է դառնում, որ դրանք տրամաբանորեն առանձնացված են նաև բովանդակային չափանիշով, քանի որ խմբավորում են Ձեր ուսումնասիրած խնդրի միատարր հատվածները: Այս հնարքները հեշտացնում են կարդացողի գործը՝ պարզեցնելով Ձեր կատարած աշխատանքի մատուցումը:

Ընդ որում՝ եթե Ձեր փաստաթուղթն ունի նաև հավելվածներ (ցանկեր, աղյուսակներ և այլն), ապա դրանք ևս պետք է առանձնացնել՝ թվարկել «Բովանդակության» «Հավելվածներ» մասում՝ ենթակետերի ներքո:

Օգտագործված նյութերը (գրականություն, զեկույցներ և այլն) նույնպես պետք է ներառել «Բովանդակության» մեջ՝ կրկին խմբավորելով միատեսակ նյութերը ենթակետերի ներքո:



2.3. Համառոտ շարադրանք և սեղմագիր

Դուք պետք է կարողանաք քաղաքականության Ձեր փաստաթուղթը ներկայացնել մեկ նախադասությամբ, մեկ պարբերությամբ, մեկ էջով: Սա նշանակում է, որ այնքան լավ պետք է տիրապետեք Ձեր հետազոտած խնդրին և դրա՝ առաջարկվող լուծմանը, որ կարողանաք առավելագույնս հակիրճ ներկայացնել այն ունկնդրին կամ կարդացողին: Պատկերացրե՛ք, որ ունեք 2 կամ 10 րոպե՝ քաղաքականության փաստաթուղթը ներկայացնելու համար. 2 րոպեի դեպքում դա համառոտ շարադրանքն է (abstract), իսկ 10-ի դեպքում՝ սեղմագիրը (summary):

Համառոտ շարադրանքը և սեղմագիրը թեև քննարկում են քաղաքականության փաստաթղթի հիմնական տեքստը, բայց դրանք գրվում են վերջում. Դուք կկարողանաք գրել Ձեր

փաստաթղթի համառոտ շարադրանքը կամ սեղմագիրը միայն ամբողջ փաստաթուղթը պատրաստ ունենալուց հետո: Այս երկուսն ունեն և՛ նմանություններ, և՛ ընդհանրություններ:

Նմանություններն այն են, որ երկուսն էլ.

- ներկայացնում են փաստաթղթի նպատակը,
- սահմանում և նկարագրում են խնդիրը,
- ներկայացնում են խնդրի լուծման տարբերակները և դրանցից լավագույնը,
- ներառում են եզրակացություններ և առաջարկություններ[12]:

Համառոտ շարադրանքն ու սեղմագիրն ունեն նաև տարբերություններ.

	Համառոտ շարադրանք	**Սեղմագիր**
Ծավալ	1 էջ	3-4 էջ
Խորություն	Մակերեսորեն ներկայացնում է փաստաթղթի նպատակը, մեթոդաբանությունը, վերհանված խնդիրը, խնդրի լուծման տարբերակները և դրանցից նախընտրելին՝ համապատասխան առաջարկություններով	Մանրամասնորեն ներկայացնում է փաստաթղթի նպատակը, մեթոդաբանությունը, վերհանված խնդիրը, խնդրի լուծման տարբերակները, դրանց գնահատումը, եզրակացություններն ու առաջարկությունները
Ձևաչափ	Ներառվում է փաստաթղթի սկզբում՝ «Բովանդակություն»-ից հետո	Կարող է առանձին փաստաթուղթ լինել՝ բուկլետի տեսքով

12 Tips for Writing Policy Papers / Luciana Herman, 2013, https://stanford.io/3tvGRcY, 5-7, Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջեր 43-44

Համառոտ շարադրանքը փաստաթղթի կարճ ընդհանուր նկարագիրն է, իսկ սեղմագիրը ամբողջ փաստաթղթի մակետն է՝ փոքրացրած տարբերակը:

Համառոտ շարադրանքն ու սեղմագիրը չպետք է լինեն Ձեր փաստաթղթի և դրա հիմքում ընկած վերլուծության պարզ վերարտադրությունը՝ նույն նախադասություններով: Պետք է փորձել փաստաթղթի բուն տեքստի յուրաքանչյուր պարբերությունը գրել մեկ նախադասությամբ, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր էջը մեկ նախադասությամբ: Լավ համառոտ շարադրանք կամ սեղմագիր գրելու համար հնարավոր է՝ ստիպված լինեք մի քանի անգամ վերախմբագրել Ձեր գրածը, մինչև որ ստանաք լավագույն արդյունքը:

Համառոտ շարադրանք կամ սեղմագիր գրելիս տեքստի առավել մատչելիության նպատակով.

- թվարկե՛ք միատեսակ մտքերը (օրինակ՝ խնդրի լուծման տարբերակները) կետերով (bullet) կամ համարակալե՛ք դրանք.
- առանձնանշե՛ք (ընդգծել կամ մգացնել) պարբերության կամ նախադասության կարևոր մտքերն արտահայտող բանալի բառերը.
- վերընթերցե՛ք տեքստը՝ հանելով ավելորդ բառերը, առանց որոնց Ձեր ասելիքը թերի չի մնա[13]:

2.4. Ներածություն

Ներածությունը քաղաքականության փաստաթղթի առաջին մասն է, որը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ տարրերի.

<u>Խնդրի ներկայացում</u>: Խնդիրը ներկայացնելիս պետք է խոսել դրա **համատեքստի** մասին: Սա ենթադրում է ներկայացնել խնդրի ծագումը (անցյալ), խնդրի առկա վիճակը (ներկա), որոշ դեպքերում

13 Policy Paper Format / Joseph J. Collins, 1993, https://bit.ly/35Ho6Lv

նաև՝ խնդրի հնարավոր խորացման հավանականությունը (ապագա): Հիշե՛ք, որ Ձեր տեքստում չպետք է լինեն ընդհանուր դատողություններ կոնկրետ երկրում առկա վիճակի մասին, որոնք հույժ կարևոր չեն խնդրի ներկայացման համար կամ կիրառելի են ցանկացած խնդրի նկատմամբ[14]:Օրինակ՝ եթե Ձեր ուսումնասիրությունը վերաբերում է պետության կողմից գիտության ֆինանսավորմանը, ապա նախընտրելի չէ փաստաթուղթը սկսել «Հայաստանի Հանրապետությունը անկախությունից հետո հայտնվեց ծանր տնտեսական վիճակում»

դատողությամբ, որը թեև օբյեկտիվորեն ճիշտ է և առնչություն ունի գիտության ֆինանսավորման հետ, բայց շատ ընդհանուր է, կիրառելի է ցանկացած այլ խնդրի նկատմամբ: Փոխարենը կարելի է սկսել այսպես, օրինակ. «Հայաստանի Հանրապետությունում գիտության ֆինանսավորումը, 1991 թվականից սկսած, տարեցտարի նվազել է»: Այս նախադասությամբ Դուք օբյեկտիվ (փաստերի, ոչ թե սեփական ընկալումների և գնահատականների վրա հիմնված) դատողություն եք անում՝ խոսելով անմիջապես Ձեր խնդրի մասին: Ընդ որում՝ թվականը նշելը վկայում է, որ խնդրի վերաբերյալ պատմական-ժամանակագրական հետազոտություն եք արել, որը, իհարկե, պետք է այնուհետև ներկայացնեք: Հարկ է հիշել, որ այս հատվածում խնդիրը պետք է ներկայացնեք

14 What Makes a Good “Policy Paper”? Ten Examples / David Glover, 2002, https://bit.ly/36OxJIL, էջ 1

ընդհանուր գծերով, առավել մանրամասն այն կնկարագրեք հաջորդ մասում՝ «Հիմնական տեքստ»-ում: Այս հատվածում Դուք պետք է հնարավորինս հետաքրքրեք կարդացողին՝ միանշանակ համոզելով նրան, որ խնդիրը հրատապ է և անհապաղ քայլեր է պահանջում: Այստեղ կարելի է խնդրի մասին որոշ «գայթակղիչ» դատողություններ՝ տվյալներ ներառել, որպեսզի կարդացողը շահագրգռվի՝ տեսնելու դրանց շուրջը հետագա զարգացումը կամ դժվար իրավիճակից ելքը:

Նպատակի սահմանում: Խնդիրը ներկայացնելուց հետո պետք է որոշակիացնել, թե ինչ **նպատակով** է կատարվել Ձեր ուսումնասիրությունը, և ինչ **խնդիր եք ցանկանում լուծել**[15]: Այս մասում պետք է նշել, որ Ձեր ուսումնասիրությունից ստացված տվյալները, վերլուծությունները և առաջարկությունները և, ի վերջո, խնդրի լուծման առաջարկվող տարբերակը կփոխեն իրականությունը դեպի լավը: Սակայն սա պետք է գրել ոչ թե պարզապես տեսական-հավանական ոճով ու լեզվով, այլ հստակ և կոնկրետ փոփոխությունները նշելով: Օրինակ՝ «Հետազոտությունը նպատակ ունի ուղղորդելու հանրային տրանսպորտի ոլորտի պատասխանատուներին՝ բարեփոխելու այդ համակարգը՝ առաջարկելով քայլ առ քայլ ուղեցույց, որը կապահովի ամբողջ Հայաստանի տարածքում անհրաժեշտ տրանսպորտային հաղորդակցության անխափան աշխատանքը: Հետազոտության արդյունքում ձևակերպված առաջարկությունների իրագործմամբ կարճ ժամանակում հնարավոր կդառնա Հայաստանի բոլոր բնակավայրերում կանոնավոր ուղևորափոխադրումների պատշաճ իրականացումը»:

Ուսումնասիրության ծավալի և մեթոդաբանության որոշակիացում: Հասարակության ցանկացած խնդիր բազմաշերտ է, խոր և բարդ՝ անկախ նրանից, թե առաջին հայացքից որքան պարզ կարող է թվալ: Ուստի Դուք պետք է ներկայացնեք ուսումնասիրության ծավալը, թե խնդրի ո՞ր կողմերն եք ուսումնասիրել, ի՞նչ չափով, ժամանակային ի՞նչ կտրվածքով, ի՞նչ աշխարհագրությամբ և այլն:

---

15 A Practical Guide for Policy Analysis: Eightfold Path to More Effective Problem Solving, Fourth Edition / Eugene Bardach, CQ Press, 2012, էջեր 21-26

Օրինակ՝ եթե ուսումնասիրել եք **կոռուպցիայի դեմ պայքարում** (խնդիր) Հայաստանի ամբողջ տարածքում (աշխարհագրություն) *հանրակրթական դպրոցներում* (շրջանակ) *ուսուցման ծրագրի* (արժեհամակարգային-կրթական կողմ) նշանակությունը, ապա հստակ պետք է նշեք դրա մասին: Որովհետև կոռուպցիայի մասին կարելի է խոսել վերազգային մակարդակում, դրա դեմ պայքարող պետական մարմինների գործիքակազմի տեսանկյունից և այլն: Եթե «ուսումնասիրության ծավալը» պատասխանում է «ի՞նչ», «որտե՞ղ», «որքա՞ն», «ե՞րբ» և այլ հարցերի, ապա «ուսումնասիրության մեթոդաբանությունը» պատասխանում է «ինչպե՞ս» հարցին: Այսինքն՝ Դուք պետք է ներկայացնեք, թե ինչ միջոցներ, աղբյուրներ, հնարքներ եք կիրառել խնդիրն ուսումնասիրելու համար: Այս մասում Դուք պետք է նշեք, օրինակ, որ հետազոտության շրջանակում կատարվել է փաստաթղթային ուսումնասիրություն, այդ թվում՝ խնդրի վերաբերյալ օրենսդրության և տեսական գրականության վերլուծություն, իրականացվել են հարցումներ և/կամ հարցազրույցներ որոշակի շրջանակի մարդկանց հետ, կազմակերպվել են քննարկումներ, մշտադիտարկումներ, կիրառվել է համեմատական մեթոդը՝ հարանման այլ խնդիրների կամ այլ երկրներում նույն խնդրի լուծումների գնահատման նպատակով և այլն:

Ամեն դեպքում մտապահե՛ք, որ այս մասը պետք է լինի համառոտ, և Ձեր ուսումնասիրության կարևոր, հիմնարար մտքերը, եզրահանգումներն ու առաջարկությունները պետք է լինեն հաջորդ մասերում:

2.5. Հիմնական տեքստ

Հիմնական տեքստը քաղաքականության փաստաթղթի կորիզն է: Այս մասում Դուք պետք է ներկայացնեք Ձեր ուսումնասիրության կարևոր արդյունքները, վերլուծությունները, հայտնաբերած օրինաչափությունները և ամենակարևորը՝ խնդրի պատճառները և դրանց չեզոքացման տարբերակները:

Հիմնական տեքստը ևս կարելի է բաժանել 3 մասի.

1. խնդրի մանրամասն ներկայացում.
2. խնդրի լուծման տարբերակների ներկայացում.
3. խնդրի լուծման տարբերակների գնահատում և լավագույն տարբերակի ընտրություն[16]:



2.5.1. Խնդրի մանրամասն ներկայացում

Այս մասում Դուք պետք է գրեք խնդրի պատճառների (տնտեսական, իրավական, տեխնիկական և այլն), դրա խորացմանը նպաստող գործոնների, հետևանքների, լուծումը խոչընդոտող երևույթների մասին: Այս հատվածը կարող եք համարել «Ներածություն»-ում տրված խնդրի ընդհանուր նկարագրության շարունակությունը՝ առավել ծավալուն ձևով:

16 Policy Papers Writer's Guide / Civil Service Commission of Israel, 2014, https://bit.ly/3CcFJiu, էջեր 18-23

Խնդրի մանրամասն ներկայացման ժամանակ Դուք պետք է հնարավորինս **խոսեք թվերով** (վիճակագրություն): Ընդ որում՝ անհրաժեշտ է ոչ թե պարզապես ներկայացնել ինչ-որ կիրառելի վիճակագրություն, այլ վերլուծել այն՝ ցույց տալով դրա ուղղակի կապը խնդրի հետ: Ավելին՝ այդ թվային տվյալները կարդացողին պետք է ցույց տան **անցանկալի վիճակ**՝ ինչ-որ **դրական բանի պակաս** կամ հակառակը՝ ինչ-որ **բացասական բանի մեծ քանակություն**[17]: Օրինակ՝ «Սահմանամերձ համայնքների հանրակրթական դպրոցներում «Քիմիա» առարկա դասավանդողների թիվը շատ քիչ է» ասելու փոխարեն կարելի է ձևակերպել այսպես՝ «Սահմանամերձ համայնքներից յուրաքանչյուր երեք դպրոցի միջինում բաժին է ընկնում «Քիմիա» առարկայի մեկ ուսուցիչ», կամ «Մարդու կյանքի դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունների քանակը Հայաստանում կտրուկ աճել է» նախադասության փոխարեն՝ «Սպանությունների վիճակագրությամբ Հայաստանը մոտեցել է աշխարհում ամենավատ ցուցանիշն ունեցող Բրազիլիային՝ տարեկան 7 դեպք՝ յուրաքանչյուր 100 հազար բնակչի հաշվով»: Անշուշտ, վերը նշված «ոչ նախընտրելի» դատողությունները ճիշտ են, նկարագրող, սակայն առաջարկվողներն ավելի «հարուստ» են, հետաքրքիր ու գրավիչ: Թվերը ճիշտ մատուցվելու (վերլուծության) դեպքում հզոր փաստարկներ են դառնում:

Ցանկացած պարագայում Ձեր յուրաքանչյուր միտք (նախադասություն) պետք է լինի վերլուծության արդյունք: Այդ միտքը կարող է լինել և՛ օբյեկտիվ (նկարագրողական), և՛ սուբյեկտիվ (գնահատողական): Այսինքն՝ կարող է բխել և՛ Ձեզնից անկախ գոյություն ունեցող տվյալներից, որոնք ցանկացած այլ մարդու նույն մտքի կհանգեցնեին, և՛ Ձեր գիտելիքներից, փորձից, համոզմունքից, այդ թվում՝ Ձեզնից անկախ գոյություն ունեցող տվյալների գնահատման հիման վրա[18]: Օրինակ՝ «Հարցված ոստիկանների 34%-ը հայտնել է, որ

---

17 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջ 29

18 Interpretation and Intention in Policy Analysis, Hendrik Wagenaar, Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods / Edited by Frank Fischer, Gerald J. Miller, and Mara S. Sidney, Taylor & Francis Group, 2007, էջեր 429-441,A Practical Guide for Policy Analysis: Eightfold Path to More Effective Problem Solving, Fourth Edition / Eugene Bardach, CQ Press,

դժգոհ է իր ամսական աշխատավարձի չափից» դատողությունը նկարագրողական է, պարունակում է արժեքավոր տվյալ, սակայն քաղաքականության փաստաթուղթը գիտական աշխատություն չէ, որ Դուք մանրամասն գրառեք Ձեր ուսումնասիրության բոլոր արդյունքները: Փոխարենը՝ այս տվյալը պետք է համադրել մեկ այլ՝ ուսումնասիրության համար էական տվյալի հետ և փորձել համեմատություն կամ հարաբերություն ցույց տալ: Օրինակ՝ «Հարցված ոստիկանների 34%-ը հայտնել է, որ դժգոհ է իր ամսական աշխատավարձից, մինչդեռ նույն չափի ամսական աշխատավարձ ստացող փրկարարների միայն 7%-ն է դժգոհել իր ամսական աշխատավարձի չափից»:

Այս մասում Դուք պետք է անեք խնդրի վերաբերյալ առանցքային եզրահանգումներ. եզրահանգումը Ձեր հավաքած տվյալների, ապացույցների վերլուծության վերջնական արդյունքն արտահայտող դատողություն է[19]:Եզրահանգումները կարևոր են, քանի որ քաղաքականության փաստաթղթի հետագա տեքստում խնդրի լուծման տարբերակները ներկայացնելիս, գնահատելիս և ավելի ուշ առաջարկություններ անելիս Դուք պետք է հիմնվեք դրանց վրա: Օրինակ՝ նախորդ պարբերությունում նշված դատողության կապակցությամբ լրացուցիչ վերլուծություններ անելով՝ Դուք կարող եք եզրահանգել՝ «Ոստիկանությունում ծառայության գրավչությանը իրականում վնասում է ոչ թե և ոչ այնքան ցածր աշխատավարձը, որքան կարծրացած և կոռումպացված համակարգում առաջխաղացման որևէ հույս չունենալու գործոնը»:

2.5.2. Խնդրի լուծման տարբերակների ներկայացում

Խնդրի լուծման տարբերակները ներկայացնելը մի քանի կարևոր նպատակ ունի.

1. կարդացողին հնարավորություն է տալիս խնդրի լուծման ուղղությամբ ճիշտ որոշում կայացնելու.

2012, էջեր 12, 32, 99

19 Guide to Policy Analysis / Mihaylo Milovanovich, European Training Foundation, 2018, https://bit.ly/3sETfID, էջ 10

2. վկայում է Ձեր ուսումնասիրության խոր, բազմակողմանի և արժանահավատ լինելու մասին.
3. օգնում է հիմնավորելու խնդրի լուծման Ձեր առաջարկած տարբերակի ջատագովումը:

Ուսումնասիրության արդյունքում Դուք արդեն գտել եք խնդրի լուծման Ձեր «լավագույն» տարբերակը, բայց պետք է հիշել, որ <u>որևէ խնդրի բացարձակ ամբողջական ու երաշխավորված արդյունավետ լուծման տարբերակ լինել չի կարող</u>[20]: Սա կարևոր է, քանի որ կօգնի Ձեզ լինելու անկողմնակալ խնդրի լուծման բոլոր տարբերակները ներկայացնելիս: Այնուամենայնիվ, քանի որ Ձեր նպատակն է, որ քաղաքականություն իրականացնողը հարի խնդրի լուծման Ձեր տարբերակին, փաստարկները պետք է շարադրեք հենց այդ տրամաբանությամբ, այն է՝ չգրել Ձեր տարբերակին «դեմ» որևէ ծանրակշիռ, անհերքելի փաստարկ[21]: Այս առումով կարևոր է, թե ինչ գիտեք խնդրի առանձին կողմերի վերաբերյալ քաղաքականություն իրականացնողի դիրքորոշումների և նրա՝ խնդրի լուծման համար առկա կամ հատկացվող ռեսուրսների մասին (ֆինանսական, մարդկային, տեխնիկական և այլն). դա կօգնի Ձեզ ճիշտ և արդյունավետ կառուցելու և ձևակերպելու Ձեր փաստարկների բուրգը՝ ամենահամոզիչից մինչև օժանդակ, լրացուցիչ: Օրինակ՝ Դուք հետազոտել եք Հայաստանի դատական համակարգում առկա ճգնաժամը լուծելու ճանապարհները և հանգել եք այն հետևության, որ լավագույն լուծումը դատական համակարգի օպտիմալացնումն է՝ դատարանների ու դատավորների քանակի կրճատման միջոցով: Առաջին հերթին Դուք պետք է հիմնավորեք, որ սա կապահովի մարդու իրավունքների առավել արդյունավետ (արդարացի և արագ) պաշտպանություն, քանի որ դատական համակարգի կարևորագույն խնդիրը մարդու իրավունքների պաշտպանությունն է (իրավական բաղադրիչ): Հաջորդը՝ պիտի համոզեք ոլորտի պատասխանատուներին, որ դա տնտեսապես ավելի ձեռնտու է,

---

20 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 33-34

21 Այնուամենայնիվ, այդպիսի փաստարկներ չպետք է գոյություն ունենան, քանի որ Դուք ուզում եք խնդիրն իսկապես լուծել, և Դուք հետազոտող-վերլուծող եք, ոչ թե անձնապես շահագրգռված, կողմնակալ կողմ (օրինակ՝ ձեռնարկատիրության ոլորտի լոբբիստ):

այսինքն՝ զգալիորեն կրճատելու է ոլորտին ուղղված պետական ծախսերը (տնտեսական բաղադրիչ): Ի վերջո, կարող եք ակնարկել, որ իշխանությունը, լուծման այլ տարբերակների համեմատ, առավել կարճ ժամկետում կիրագործի դատական համակարգը բարեփոխելու իր խոստումը (քաղաքական բաղադրիչ):

Իսկ խնդրի լուծման այլընտրանքային քանի՞ տարբերակ ներկայացնել և ինչպե՞ս գտնել դրանք: Այս հարցերը տրամաբանական են, և թվում է՝ դժվար է դրանց պատասխանելը, բայց այդպես չէ: Նախ՝ ուսումնասիրության արդյունքում Դուք արդեն գիտեք, թե ինչ մոտեցումներ կան խնդրի լուծմանը՝ թե՛ ուսումնասիրության վայրում և թե՛ աշխարհում՝ այլ երկրներում. սա արդեն ձեզ կտա առնվազն մեկ այլընտրանքային գաղափար խնդրի լուծման տարբերակի մասին: Օրինակ՝ դատական համակարգում առկա ճգնաժամը լուծելու մեկ այլ տարբերակ կարող է լինել դատական համակարգի դիվերսիֆիկացիան՝ նոր մասնագետների ներգրավմամբ դատարանների տեսակների (մասնագիտացված դատարաններ) և քանակի ավելացումը: Եթե Դուք որպես այլընտրանքային տարբերակ (կամ ավելի) ընտրում եք որևէ այլ երկրում կիրառված օրինակ, ապա խիստ կարևոր է, որ ընտրեք ուսումնասիրության երկրի հետ համադրելի որևէ երկիր: Սա նշանակում է, որ այդ երկիրն իր տարածքով, բնակչությամբ, տնտեսական ներուժով, մշակույթով և սոցիալական այլ հատկանիշներով առավելագույնս մոտ պիտի լինի ուսումնասիրության երկրին: Վերջապես՝ միշտ կարելի է և անհրաժեշտ է այլընտրանքային տարբերակների թվում ներառել և վերլուծել տվյալ պահին խնդրի լուծման ուղղությամբ իրականացվող քայլերը, այսինքն՝ խնդրի լուծման առկա տարբերակը՝ որպես այլընտրանք:

Ի վերջո, խնդրի լուծման տարբերակը՝ որպես կատարման ենթակա կոնկրետ քայլերի ամբողջություն, ի՞նչ պետք է լինի: Ցանկացած պարագայում Դուք ընտրություն եք կատարելու երկու մեծ խումբ գործողությունների շարքից՝ **տնտեսական** բնույթի և **ոչ տնտեսական** բնույթի[22]:

---

22 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S.

Տնտեսական բնույթի քայլերը ևս, իրենց հերթին, լինում են դրական (տրամադրող), օրինակ՝ պետական ֆինանսավորման ավելացում, սուբսիդավորում, և բացասական («չվերցնող»), օրինակ՝ արտոնությունների տրամադրմամբ պետության ըվճարումներից ազատում, պարտքի ներում:

Ոչ տնտեսական բնույթի քայլերը ևս կա՛մ դրական են (արտոնող, զորեղացնող), օրինակ՝ վերապատրաստումների իրականացում, օրենսդրության բարեփոխում՝ խնդրի բացասական ազդեցությունը կրող մարդկանց հնարավորությունների ընդլայնմամբ, կա՛մ բացասական (սահմանափակող)՝ օրենսդրական արգելքների սահմանում, պատժի խստացում:

Դատական համակարգի օպտիմալացման օրինակով կարող եք, օրինակ, առաջարկել միավորել Սահմանադրական և Վճռաբեկ դատարանները՝ համապատասխանաբար փոխելով Սահմանադրությունը, ինչպես նաև Դատական օրենսգիրքն ու ոլորտային դատավարական օրենսգրքերը, խստացնել դատավորների մասնագիտական և էթիկայի գնահատման չափորոշիչները (ներառյալ՝ վեթինգ), կրճատել դատավորների քանակը մրցակցային գնահատման (ատեստավորման) հիման վրա, բարձրացնել դատավորների աշխատավարձը, պարբերաբար վերապատրաստել և գնահատել դատավորներին և այլն:

2.5.3. Խնդրի լուծման տարբերակների գնահատում և լավագույն տարբերակի ընտրություն

Խնդրի լուծման տարբերակները գնահատելիս Դուք պետք է ցույց տաք, թե ո՛ր տարբերակի դեպքում ի՞նչ հավանական փոփոխություններ տեղի կունենան, և ի՞նչ միջոցներ կպահանջվեն դրանց հասնելու համար: Այս նախադասության մեջ «հավանական» բառն ուղղված է Ձեզ, ոչ թե կարդացողին՝ քաղաքականություն իրագործողին: Այսինքն՝ Դուք պետք է վստահ ներկայացնեք ակնկալվող փոփոխությունները՝ դրանք համարելով հավանականներից ամենահավանականը. սա վերաբերում է խնդրի լուծման թե՛ Ձեր ընտրած և թե՛ այլընտրանքային

Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 9-10

տարբերակներին, իհարկե, առավելությունը տալով Ձեր ընտրած տարբերակին:

Խնդրի լուծման տարբերակներն անպայման պետք է ենթարկել ՔՏՍՏ (քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական) գնահատման: Սա նշանակում է, որ Դուք պետք է վերլուծեք և բացատրեք, թե խնդրի լուծման տարբերակներից յուրաքանչյուրը՝

1. **քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական ինչ ռեսուրսներ և միջոցներ կպահանջի քաղաքականություն իրականացնողից.**
2. **քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական առումով ինչպես կբարելավի մարդկանց կյանքը[23]:**

Քաղաքական բաղադրիչը ներառում է քաղաքական (նաև՝ ռազմական) իրադրությունը, քաղաքական բնույթի միջոցառումները, օրենսդրությունը, կառավարության ծրագրերը և այլն:

Տնտեսական բաղադրիչը ներառում է պետական կամ համայնքային ֆինանսական ծախսերը կամ եկամուտները, այլ աղբյուրներից (դոնորներ) ֆինանսական միջոցները, աշխատատեղերը, գնաճը և այլն:

Սոցիալական բաղադրիչը ներառում է ժողովրդագրական վիճակը, արտագաղթը, հասարակական տրամադրությունները, կրթական գերակայությունները, գիտական առաջատար ուղղությունները և այլն:

Տեխնոլոգիական բաղադրիչը ներառում է տեխնիկական, բարձր տեխնոլոգիական միջոցները, էներգիայի աղբյուրները և այլն[24]:

Շատ հնարավոր է, որ այս բաղադրիչներից որևէ մեկին ակնհայտ առավելություն տրվի, այսինքն՝ մեկը «հաղթի» մյուսներին: Խնդրի

---

23 Tips for Writing Policy Papers / Luciana Herman, 2013, https://stanford.io/3tvGRcY, էջեր 2, 5

24 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 194-200

լուծումը թեև կարող է լինել, օրինակ, սոցիալական և քաղաքական բաղադրիչների առումով ամենանախընտրելին (օրինակ՝ յուրաքանչյուր նորածին երեխայի համար պետական միջոցներից վճարել մեծ գումար. ծնելիությունը կմեծանա, իսկ քաղաքական իշխանությունը դիվիդենտներ կշահի), բայց տնտեսապես՝ ամենաքիչ նպատակահարմարը կամ դժվարիրագործելի: Կարևոր է, որ **քաղաքական բաղադրիչը չգերակայի մյուսների նկատմամբ**, այսինքն՝ խնդրի ամենալավ լուծումը չանտեսվի զուտ քաղաքական աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

Օրինակ՝ եթե Դուք պնդում եք, որ դատական համակարգի օպտիմալացման շրջանակում Հայաստանի Վճռաբեկ ու Սահմանադրական դատարանները պետք է միավորվեն, ապա Ձեր փաստարկումը պետք է կառուցեք հետևյալ կերպ. առաջին՝ պետք է չեզոքացնել Ձեր այս լուծմանը դեմ ամենաազդեցիկ (կամ որպես այդպիսին շրջանառվող) առարկությունը, այն է՝ «Վճռաբեկ և Սահմանադրական դատարանները տարբեր բովանդակության արդարադատություն են իրականացնում՝ ընդհանուր արդարադատություն և սահմանադրական արդարադատություն, և Վենետիկի հանձնաժողովը իր մի շարք եզրակացություններում չի խրախուսել այս մոտեցումը»: Ի պատասխան այս առարկությունների՝ պետք է նշել, օրինակ՝ «Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների միավորման դեպքում այս երկու ատյաններից յուրաքանչյուրը բովանդակային առումով շարունակելու է իրականացնել նույն գործառույթները՝ փոփոխված՝ միասնականացված դատավարական (ընթացակարգային) կանոններով: Ընդհանուր և սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական մարմինների համատեղումը հնարավորություն կտա մարդկանց առավել արդյունավետ պաշտպանելու իրենց հիմնարար իրավունքները. նրանք դատարանին ուղղված իրենց բողոքում կկարողանան վիճարկել ինչպես կոնկրետ գործի փաստական հանգամանքներին առնչվող իրավական հարցերը, այնպես էլ այդ գործով կիրառված իրավական նորմերի սահմանադրականությունը: Այդպիսով մարդը ստիպված չի լինի ամիսներ սպասել Վճռաբեկ դատարանի որոշմանը, որից հետո միայն կկարողանա դիմել

Սահմանադրական դատարան: Ինչ վերաբերում է Վենետիկի հանձնաժողովի բացասական իրավական դիրքորոշմանն այս հարցին, ապա մի շարք կարծիքներում և եզրակացություններում հանձնաժողովը իրավունքի գերակայության սկզբունքների պահպանման պայմանով ընդունելի է համարել Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների միավորումը մեկ՝ Գերագույն (Բարձրագույն) դատարանում»:

Ինչպես տեսնում եք, կոնկրետ այս օրինակում առաջնային նշանակություն ունի իրավական բաղադրիչը, քանի որ խնդիրը վերաբերում է իրավական իրականության կարևոր տարրին՝ արդարադատությանը: Իհարկե, Դուք կարող եք այնուհետև ցույց տալ նաև Ձեր առաջարկի, օրինակ, տնտեսական նպատակահարմարությունը՝ հիմնավորելով, որ դրա իրագործման դեպքում ծախսերը կկրճատվեն 10-15%-ով: Ցանկացած խնդրի պարագայում զգո՛ւյշ եղեք թվերի հետ. դրանք պետք է հնարավորինս ճշգրիտ, արժանահավատ լինեն: Եթե չկան խնդրին առնչվող ծախսերի մասին ճշգրիտին գոնե մոտ տվյալներ, ապա ավելի լավ է այս բաղադրիչը թողնել վերջում՝ որպես օժանդակ փաստարկ, կամ ընդհանրապես «չդիպչել» դրան[25]:

Խնդրի լուծման տարբերակների գնահատումն ավելի մատչելի դարձնելու համար կարող եք օգտագործել աղյուսակ՝ ցույց տալու բոլոր բաղադրիչների առանձին չափումները՝ դրանց դրական ու բացասական (ուժեղ ու թույլ) կողմերը: Դրական և բացասական կողմերը կարելի է նշել, համապատասխանաբար, «+» և «-» նշաններով:

Աղյուսակում ներկայացված լուծումների համար Կառավարության ծրագրին համահունչ լինելն ընտրված է որպես դրական կողմ: Լուծման 1-ին և 2-րդ տարբերակներն ամբողջությամբ համապատասխանում են Կառավարության ծրագրին, իսկ 3-րդը մասամբ է համապատասխանում: Լուծման տարբերակի համապատասխանությունը որոշում կայացնողների ընդունած քաղաքական ռազմավարական փաստաթղթին կարևոր է, բայց ոչ միշտ է միանշանակ որոշիչ: Սա սկզբի համար առավելություն է

25 Rational Choice in Public Policy: The Theory in Critical Perspective, Steven Griggs, Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods / Edited by Frank Fischer, Gerald J. Miller, and Mara S. Sidney, Taylor & Francis Group, 2007, էջեր 173-185

տալիս 1-ին և 2-րդ տարբերակներին:

Քաղաքական բաղադրիչի ներքո որպես բացասական կողմ նշված է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը (իրավական տարր): Սա պայմանականորեն համարում ենք բացասական, քանի որ հաճախ օրենսդրական փոփոխություններն առնվազն բավականին ժամանակատար են, առավել ևս՝ եթե Սահմանադրությունը պետք է փոխվի: Այլ իրավիճակում, եթե լուծման բոլոր տարբերակների դեպքում օրենսդրական փոփոխություններն անխուսափելի են, դա չպետք է ներառել գնահատման չափանիշների թվում: Այս չափանիշով առավելություն ունի 3-րդ տարբերակը, քանի որ որոշում կայացնողից որևէ ջանք չի պահանջվում, այնուհետև նախընտրելի է 2-րդ տարբերակը, և միայն վերջում՝ 1-ինը:

Անցնելով տնտեսական բաղադրիչին՝ տեսնում ենք, որ լուծման 1-ին և 2-րդ տարբերակները խնայում են որոշում կայացնողի ֆինանսական միջոցները, մինչդեռ 3-րդը ոչ միայն չունի այս դրական կողմը, այլև պահանջում է որոշակի լրացուցիչ ծախս. սա թուլացնում է 3-րդ տարբերակի դիրքերը: Ինչ վերաբերում է 1-ին և 2-րդ տարբերակներին, ապա թեև 1-ինն ավելի շատ խնայողության է հանգեցնում, սակայն ունի նաև որոշում կայացնողի տեսանկյունից բավականին բացասական հետևանք՝ աշխատատեղերի կրճատում:

Հաջորդ՝ սոցիալական բաղադրիչով լուծման բոլոր տարբերակներն ունեն դրական կողմ՝ մեկ տարբերությամբ՝ դրական վիճակի հասնելու ժամկետը. որոշում կայացնողի համար միշտ ցանկալի է արագ արդյունքը, հետևաբար 1-ին տարբերակը որոշակի առավելություն ունի 2-րդի և 3-րդի նկատմամբ: Սոցիալական բաղադրիչով 2-րդ և 3-րդ տարբերակները նաև թույլ կողմեր ունեն, և առաջին հայացքից դրանցից ավելի անցանկալի է 3-րդ տարբերակի հետևանքը:

Վերջին՝ տեխնոլոգիական բաղադրիչով 2-րդ և 3-րդ տարբերակներն ունեն միևնույն դրական կողմը և չունեն որևէ բացասական կողմ, իսկ 1-ինը ոչ միայն չունի դրական կողմ, այլև որոշում կայացնողից պահանջում է լրացուցիչ ռեսուրսների

Լուծումների ազդեցության գնահատում								
	Քաղաքական		Տնտեսական		Սոցիալական		Տեխնոլոգիական	
	+	-	+	-	+	-	+	-
Լուծում 1	Համահունչ է Կառավարության ծրագրի նպատակներին	Անհրաժեշտ են օրենսդրական բազմաթիվ փոփոխություններ	300.000.000 ՀՀԴ խնայողություն	40 աշխատատեղի կրճատում	Նպաստում է դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը կարճ ժամկետում (1-2 տարի)	Չկա	Չկա	Պահանջում է նոր տեխնոլոգիական լուծումների ներդրում
Լուծում 2	Համահունչ է Կառավարության ծրագրի նպատակներին	Անհրաժեշտ են օրենսդրական որոշ փոփոխություններ	100.000.000 ՀՀԴ խնայողություն	Չկա	Նպաստում է դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը միջին ժամկետում (3-4 տարի)	Կարող է հանգեցնել որոշ դատական գործերի քննության ձգձգման	Խթանում է առկա տեխնոլոգիական միջոցների առավել արդյունավետ կիրառումը	Չկա
Լուծում 3	Մասամբ է համահունչ Կառավարության ծրագրի նպատակներին	Չկա	Չկա	Պահանջում է 200.000.000 ՀՀԴ ծախս	Նպաստում է դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը միջին ժամկետում (3-4 տարի)	Կարող է հանգեցնել դատավորների դժգոհության և դատական համակարգից հեռացման	Խթանում է առկա տեխնոլոգիական միջոցների առավել արդյունավետ կիրառումը	Չկա

հատկացում, ինչը առավելություն է տալիս 2-րդ և 3-րդ տարբերակներին:

Ամփոփելով աղյուսակում ներկայացված՝ խնդրի լուծման տարբերակների գնահատումը՝ կարող ենք ասել, որ առավել նախընտրելին 2-րդն է, քանի որ թեև որոշ բաղադրիչներով փոքր-ինչ զիջում է մյուս տարբերակներին, սակայն հանգեցնում է նույն դրական արդյունքին՝ համեմատաբար քիչ ռեսուրսների (ժամանակ, ֆինանսներ, մարդիկ) հատկացմամբ և համեմատաբար ընդունելի բացասական կողմերով:

Ձեր աղյուսակը կարող է և պետք է յուրաքանչյուր բաղադրիչի ներքո ունենա գնահատման ավելի շատ չափանիշներ՝ դրական և բացասական կողմեր: Խնդրի լուծման տարբերակների ուժեղ և թույլ կողմերն այսպիսի աղյուսակի վերածելը կօգնի Ձեզ ավելի լավ կենտրոնանալու նախընտրելի տարբերակի օգտին համոզիչ փաստարկներ բերելու վրա, ինչպես նաև ավելի համոզիչ կդարձնի այն որոշում կայացնողի համար:

Գնահատման այս բաղադրիչներին զուգահեռ՝ մտքում մշտապես պետք է ունենաք խնդրի լուծման տարբերակների գնահատման հետևյալ 3 կարևորագույն սկզբունքները.

արդյունավետություն, որը ցույց է տալիս, թե առաջարկվող քայլերը նվազագույն անհրաժեշտ միջոցների հատկացմամբ իսկապես ինչ չափով կհանգեցնեն բացասական վիճակի փոփոխության դեպի լավը, ավելի կոնկրետ՝ կվերացնեն խնդրի պատճառները.

իրագործելիություն, որը ցույց է տալիս, թե որքան իրատեսական է տվյալ ժամանակահատվածում, իրադրությունում և միջոցներով հասնել ցանկալի արդյունքի.

ճկունություն, որը ցույց է տալիս, թե իրադրության փոփոխությունների դեպքում որքան արագ և անվտանգ կլինեն խնդրի լուծմանն ուղղված քայլերի փոփոխությունը և համապատասխանեցումը նոր իրադրությանը[26]:

---

26 Policy Papers Writer's Guide / Civil Service Commission of Israel, 2014, https://bit.ly/3CcFJiu, էջեր 15-17

2.6. Եզրակացություններ և առաջարկություններ

Քաղաքականության փաստաթղթի այս վերջին մասը Ձեր փաստաթուղթը վերածում է որոշում կայացնելու գործիքի: Այսինքն՝ Ձեր կատարած ամբողջ ուսումնասիրությունը և նախորդ մասում շարադրված մտքերն առարկայանում՝ հստակ ու չափելի գործողությունների շարք են դառնում «Եզրակացություններ և առաջարկություններ» մասում:

Այս մասում խստորեն պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- **համաչափություն.** չպետք է լինեն այնպիսի դատողություններ, որոնց համար հիմք ընդունված տեղեկությունները չեն նշվել նախորդ մասում՝ «Հիմնական տեքստ»-ում, չեն բխում դրանից[27].
- **որոշակիություն.** չպետք է լինեն ընդհանուր բնույթի, ցանկացած տեսակի խնդրի համար կիրառելի դատողություններ[28].
- **գրավչություն.** տեխնիկապես պետք է առանձնացնել, ընդգծել, համարակալել եզրակացություններն ու առաջարկությունները:

Հիշե՛ք, որ ժամանակի սղության պատճառով քաղաքականության փաստաթղթի հասցեատերերը հաճախ կարդում են փաստաթղթի հենց այս մասը, ուստի այն պետք է բյուրեղացնի կատարված աշխատանքի բոլոր «թանկարժեք քարերը»:

2.6.1. Եզրակացություններ

Եզրակացությունները նախորդ մասում տեղ գտած կարևոր եզրահանգումների ամփոփ, որոշակիացված շարադրանքն են: Դրանք պետք է վերաբերեն խնդրին և խնդրի լուծման տարբերակներին, այդ թվում՝ գնահատման առումով: Պատկերացրե՛ք՝ Դուք ունեք ընդամենը 15 տող և 5 կետով

---

27 What Makes a Good “Policy Paper”? Ten Examples / David Glover, 2002, https://bit.ly/36OxJIL, էջեր 1, 3

28 Food Security Communication Toolkit / Food and Agricultural Organization of the United Nations, 2001, էջեր 148-149, What Makes a Good “Policy Paper”? Ten Examples / David Glover, 2002, https://bit.ly/36OxJIL, էջ 1

պետք է ներկայացնեք Ձեր ուսումնասիրության կարևորագույն արդյունքները. դրանք հենց եզրակացություններն են:
Ընդ որում՝ եզրակացությունները չպետք է լինեն Ձեր եզրահանգումների բառացի կրկնությունը, այլ պետք է ֆիլտրեն դրանցից ամենակարևորները, հատկապես նրանք, որոնք ամրապնդում են խնդրի լուծման Ձեր առաջարկած տարբերակի նախընտրելիությունը[29]: Օրինակ՝ «Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների առանձնացվածությունը հանգեցնում է գործի քննության ժամկետի ձգձգման առնվազն մեկուկես անգամ՝ այն ժամկետի համեմատ, որը կլինի այդ դատական ատյանների միավորման դեպքում»: Եզրահանգումները չեն կարող լինել



վերացական, օրինակ՝ «Նոտարական ծառայությունների հեռահար մատուցումը իրագործելի չէ»: Սա վատ եզրակացություն է, քանի որ Դուք ցույց չեք տալիս, թե ինչ պատճառով է նոտարական ծառայությունների հեռահար մատուցումը ոչ իրագործելի՝ օրենսդրության անկատարությա՞ն (արգելքի), տեխնիկական միջոցների կամ դրանց համար ֆինանսավորման

29 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջեր 74-75, Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 128-129

բացակայությա՞ն, թե՞ նոտարների՝ համապատասխան հմտությունների բացակայության:

2.6.2. Առաջարկություններ

Վերջապես, Դուք այս ամբողջ աշխատանքը կատարել եք խնդրի լուծում առաջարկելու համար: Այդ լուծումը, ինչպես արդեն գիտեք, հստակ գործողությունների ցանկն է, որ պետք է ներառեք «Առաջարկություններ» մասում: Այս գործողությունները պետք է լինեն իրագործելի և չափելի: Օրինակ՝ «Միջոցներ ձեռնարկել տարեց անձանց ունակությունները արտադրական գործընթացում ներդնելու ուղղությամբ» առաջարկությունը ոչ մի հստակ քայլ չի առաջարկում որոշում կայացնողին: Ձեր խնդիրը հենց այն է, որ հետազոտության արդյունքներից ելնելով՝ Դուք առաջարկեք, թե տարեց անձանց ունակությունները արտադրական գործընթացում ներդնելու ուղղությամբ ինչ միջոցներ պետք է ձեռնարկել, կամ «Վերացնել զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունները» ոչ թե առաջարկություն է, այլ պահանջ կամ կոչ, որը կարող է անել, օրինակ, ցանկացած զորակոչիկի ծնող, որ տեղյակ է այդ բացասական երևույթին: Մինչդեռ ոլորտի պատասխանատուն, գիտակցելով բանակում ոչ կանոնադրային հարաբերությունները բացառելու կարևորությունը, ակնկալում է տեսնել հենց այն գործողությունները, որոնց կատարումը կհանգեցնի այդ ցանկալի արդյունքին: Առաջարկության մեկ այլ անցանկալի տեսակ է, օրինակ, խնդրի լուծման համար ծախսերի ավելացումը՝ ֆինանսավորման ավելացումը (սուբսիդավորում, արտոնությունների սահմանում և այլն): Այս առաջարկությունը կարելի է անել բոլոր խնդիրների և յուրաքանչյուր խնդրի լուծման համար: Դուք կարող եք առաջարկել պետությանը որևէ խնդրի լուծման վրա ավելի շատ գումար ծախսել, եթե՝ ա) դա խնդրի լուծման ցանկացած տարբերակի դեպքում անխուսափելի է, բ) գիտեք, որ այդ ֆինանսական միջոցները կան կամ հայթայթելի են, գ) Ձեր հաշվարկները ճշգրիտ են և հստակ ցույց են տալիս ակնկալվող դրական փոփոխությունները բարձր հավանականությամբ[30]:

---

30 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 180-191

Մտապահե՛ք, որ հենց այսօր կարող են Ձեզ տրամադրել անհրաժեշտ միջոցները և հանձնարարել իրագործել այն գործողությունները, որոնք հենց Դուք եք առաջարկել որպես խնդրի լուծում. ազնվորեն պատասխանե՛ք ինքներդ Ձեզ՝ կարողանալո՞ւ եք իրագործել դրանք այնպես, ինչպես ձևակերպել եք: Եթե ոչ, ապա փոխե՛ք դրանք:

2.7. Հավելվածներ

Հավելվածները պատկերավոր ներկայացնում են Ձեր ուսումնասիրության որոշ արդյունքներ: Դրանք պարտադիր չեն, սակայն երբեմն շատ օգտակար կարող են լինել Ձեր դատողությունների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապացուցելու համար: Հավելվածներն ամրապնդում են հատկապես «Հիմնական տեքստ»-ում տեղ գտած Ձեր դատողությունները՝ փաստարկներն ու եզրահանգումները:

Կարող են լինել աղյուսակների, սխեմաների, ցուցակների կամ այլ տեսքով: Կարևոր է հիշել, որ դրանք չպետք է պարունակեն չափազանց շատ տվյալներ, օրինակ՝ կարդացողը հազիվ թե ցանկանա ուսումնասիրել բազմաթիվ տողեր կամ երանգներ ունեցող վանդակավոր տեքստերով կամ նկարներով աղյուսակներ կամ գրաֆիկներ: Փորձե՛ք մեծ աղյուսակները կամ գրաֆիկները տրոհել մի քանի մասի՝ ներկայացնելով միայն ամենաէական տվյալները[31]: Ընդ որում, եթե Ձեր փաստաթուղթը էլեկտրոնային ձևաչափով է, ապա այդ հավելվածները կարելի է ներառել փաստաթղթի այս մասում էլեկտրոնային ձևաչափով:

Համոզվե՛ք, որ հավելվածն անկասկած հավելյալ արժեք ունի Ձեր փաստաթղթի համար, հակառակ դեպքում հանե՛ք այն:

---

31 Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, էջեր 81-83

2.8. Գրականություն

Գրականության ցանկը երկու կարևոր առաքելություն ունի՝ ա) քաղաքականության փաստաթղթի հասցեատիրոջը հնարավորություն տալ ստուգելու Ձեր օգտագործած տեղեկությունները և բ) առավել մանրամասն ուսումնասիրելու հետաքրքրող մասերը հենց սկզբնաղբյուրից:

Գրականության ցանկում պետք է ներառել օգտագործված բոլոր տեսակի նյութերը՝ **տեսական** (դասագրքեր, մենագրություններ, գիտական հոդվածներ և այլն) և **գործնական** (օրենսդրական ակտեր, զեկույցներ, տեսագրություններ և այլն): Ընդ որում՝ անհրաժեշտ է միատարր աղբյուրները ենթախմբերի բաժանել:

Կարևոր է հիշել, որ քաղաքականության հասցեատերը կարող է ունենալ գրականության ցանկի կազմմանը վերաբերող տեխնիկական պահանջներ, օրինակ՝ ի թիվս այլնի, հրատարակչությունը նշելու պարտադիր պահանջ, որոնք չի կարելի անտեսել:

Վերջաբան

«Ավելի լավ է կատարված գործը, քան անթերին»:
Շերիլ Սանդբերգ, ամերիկացի գործարար, բիզնես կառավարիչ

Քաղաքականության փաստաթղթի մշակման վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ կան: Դրանք բոլորն ունեն մեկ ընդհանրություն, այն է՝ չեն առաջարկում քաղաքականության փաստաթղթի մշակման միանման, բացարձակ ճշմարիտին հավակնող խորհուրդներ: Քաղաքականության փաստաթղթի մշակումը ինտելեկտուալ գործընթաց է, որը փոփոխվում, հարմարվում է ուսումնասիրվող խնդրի շուրջը տիրող իրողությանը և ամենուր միատեսակ չի կարող լինել: Փորձը, ինչպես ցանկացած այլ դեպքում, կարևորագույն նշանակությունն ունի քաղաքականության որակյալ փաստաթուղթ մշակելու հարցում:

Դուք պետք է հիշեք, որ քաղաքականության ոչ մի փաստաթուղթ, այդ թվում՝ Ձերը, չի կարող կատարյալ լինել: Բազմաթիվ գործոններ են ազդում քաղաքականության փաստաթղթի մշակման վրա: Դուք կարող եք շատ քիչ ժամանակ ունենալ խնդիրն ուսումնասիրելու և լավագույն լուծումն առաջարկելու համար, Ձեզ կարող է տրվել հանձնարարություն՝ հիմնավորել խնդրի լուծման կոնկրետ տարբերակի նախընտրելի լինելը, Դուք կարող եք ապարդյուն ջանքեր գործադրել խնդրի վերաբերյալ համապարփակ ու հավաստի տվյալներ՝ «ապացույցներ» հավաքելու վրա...[32] Այս շարքը կարելի է անվերջ շարունակել:

Վերոնշյալ խնդիրները երբեմն հուսահատեցնող են, բայց օրինաչափ ու բնական են: Դրանք կստիպեն Ձեզ ուսումնասիրության ընթացքում կասկածել Ձեր իսկ եզրահանգումների և/կամ առաջարկությունների հիմնավորվածությանը. դա է քաղաքականության փաստաթղթի մշակման ճիշտ ընթացքը, և այլ կերպ լինել չի կարող: Եվ

---

32 A Practical Guide for Policy Analysis: Eightfold Path to More Effective Problem Solving, Fourth Edition / Eugene Bardach, CQ Press, 2012, էջեր 18-19

համապատասխանաբար, եթե Դուք աներկբայորեն վստահ եք քաղաքականության Ձեր փաստաթղթի անթերի ու անխոցելի լինելու հարցում, ապա ինչ-որ բան, անշուշտ, սխալ եք արել, ինչ-որ բան բաց եք թողել:

Ուստի Ձեզ՝ հետազոտողի համար կարևոր է ձևավորել և ամրապնդել անորոշության հետ հաշտվել կարողանալու ունակությունը[33]: Սա բոլորովին չի նշանակում, թե խնդիրը կարելի է մակերեսորեն ուսումնասիրել և/կամ առաջարկել կասկածելի լուծում, այլ պարզապես պետք է անել հնարավոր առավելագույնը՝ հաշվի առնելով Ձեր ունեցած բոլոր ռեսուրսները, առաջին հերթին՝ տրված ժամանակը:

33 Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, էջեր 28-29

Օգտագործված աղբյուրներ

1. Basic Methods of Policy Analysis and Planning, Third Edition / Carl V. Patton, David S. Sawicki, Jennifer J. Clark, Routledge, 2016, New York, USA
2. A Practical Guide for Policy Analysis: Eightfold Path to More Effective Problem Solving, Fourth Edition / Eugene Bardach, CQ Press, 2012, California, USA
3. Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods / Edited by Frank Fischer, Gerald J. Miller, and Mara S. Sidney, Taylor & Francis Group, 2007, Cleveland, USA
4. Writing Effective Public Policy Papers / Eoin Young and Lisa Quinn, Open Society Institute, 2002, Budapest, Hungary
5. Food Security Communication Toolkit / Food and Agricultural Organization of the United Nations, 2001, Rome, Italy
6. Guide to Policy Analysis / Mihaylo Milovanovich, European Training Foundation, 2018, https://bit.ly/3sETfID
7. Policy Papers Writer's Guide / Civil Service Commission of Israel, 2014, https://bit.ly/3CcFJiu
8. Writing Effective Policy Papers – Translating Academic Knowledge into Policy Solutions / Ali G. Scotten, 2011, https://bit.ly/3vBTnKB
9. Tips for Writing Policy Papers / Luciana Herman, 2013, https://stanford.io/3tvGRcY
10. Policy Paper Format / Joseph J. Collins, 1993, https://bit.ly/35Ho6Lv
11. What Makes a Good "Policy Paper"? Ten Examples / David Glover, 2002, https://bit.ly/36OxJIL

Abstract

The guide aims to become a tool for civil society organizations to effectively participate in the policy-making processes and develop evidence-based policy recommendations. It will assist researchers and experts to conduct policy analysis and develop policy documents on emerging issues. It presents the requirements for a solid policy document regarding the structure and content, explaining through examples the best practice of developing policy recommendations. The guide also comprises universal tools, which can be useful for evaluation of results of any research or projects.

Սեղմագիր

Ուղեցույցը նպատակ ունի դառնալու գործիք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար հանրային քաղաքականությունների մշակմանը և բարելավմանը արդյունավետ մասնակցելու ընթացքում: Այն կօգնի հետազոտողներին և փորձագետներին՝ քաղաքականության վերլուծություններ իրականացնել և մշակել քաղաքականության փաստաթղթեր հրատապ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ: Այն ներկայացնում է քաղաքականության լավ փաստաթղթի կառուցվածքին և բովանդակությանը վերաբերող կանոնները՝ օրինակների միջոցով բացատրելով քաղաքականության փաստաթղթի մշակման լավագույն փորձառությունը: Ուղեցույցը ներառում է նաև համընդհանուր բնույթի այնպիսի գործիքներ, որոնք կարող են օգտակար լինել ցանկացած հետազոտական աշխատանքի արդյունքների կամ ծրագրերի գնահատման համար:

«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակված այլ նյութեր

- Չորս պատմություն իշխանության մասին, 2022, https://epfarmenia.am/hy/document/Four-Stories-About-Power-2022
- ԵՀՀ կրթություն և ուսուցում, 2021, https://epfarmenia.am/hy/document/EPF-Education-and-Learning
- ԵՀՀ գենդերային քաղաքականությունը. տեսական հիմնահարցեր, 2021, https://epfarmenia.am/hy/document/EPF-Gender-Policy
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար նախատեսված ձեռնարկ, 2021, https://epfarmenia.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021
- Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց, 2021, https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021
- Բռնության մշակույթը Հայաստանում, 2020, https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia
- Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020, https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations
- Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, https://epfarmenia.am/hy/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities

- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018

- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

Նախատեսվում է հրապարակել

- Աջակցություն քաղաքացիական հասարակությանը կազմակերպագործունեական խաղի հաշվետվություն, https://epfarmenia.am/hy/document/Creative-Game-Final-Report-2021
- ԵՀՀ-ի նորարարական մոտեցումը կազմակերպչական կառավարմանը. Փոփոխությունները ԵՀՀ-ի կառավարման գործընթացում 2007-ից ի վեր, https://epfarmenia.am/hy/document/Changes-in-EPF-management-processes-since-2007-AR-2020
- Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, https://epfarmenia.am/hy/document/Towards-a-Civics-Advancement-Measurement-Tool

Publications under the "EPF University" heading

- Four Stories about Power (in Armenian). (2022) https://epfarmenia.am/hy/document/Four-Stories-About-Power-2022
- EPF Education and Learning. (2021) https://epfarmenia.am/document/EPF-Education-and-Learning
- EPF Gender Policy. (2021) https://epfarmenia.am/document/EPF-Gender-Policy
- Handbook for Guardianship and Trusteeship Bodies (in Armenian). (2021) https://epfarmenia.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021
- Ethical Guidelines for Social Research (in Armenian). (2021) https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021
- Culture of Violence in Armenia (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia
- Culture of Violence in Armenia. Reflection and recommendations (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations
- Research on Alternative Dispute Resolution in Armenia. (2020) https://epfarmenia.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) https://epfarmenia.am/document/

Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia

- Relations Without Interactions. (2020) https://epfarmenia.am/document/Relations-without-Interactions
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Publishing Guide (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) https://epfarmenia.am/document/MSTA-Creative-Game
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) https://epfarmenia.am/document/OAS-Highlights-CELoG-2018
- Culture, Literature and Art. (2018) https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian). (2018) https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

Expected to be published

- Changes in EPF management processes since 2007. EPF innovative approach to management. https://epfarmenia.am/document/Changes-in-EPF-management-processes-since-2007-AR-2020
- “Support to Civil Society” Creative Game Report (in Armenian). https://epfarmenia.am/hy/document/Creative-Game-Final-Report-2021
- Towards a Civics Advancement Measurement Tool. https://epfarmenia.am/document/Towards-a-Civics-Advancement-Measurement-Tool

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ քաղաքացիական հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում: Այն համախմբում է մտածողության առաջնորդների, հասարակական ոլորտի գործիչների, որոնք ունեն բարձր մոտիվացիա և իրենց ամենօրյա գործունեության մեջ կոտրում են կարծրատիպերը և նպաստում հայաստանյան հասարակության համար զարգացման ճիշտ ուղիներ մշակելուն: Որպես «մտագործող» («think and do tank») կառույց, որն աշխատում է քաղաքականությունների մշակումից մինչև դրանց իրագործում, և որի առաքելությունն ու գործունեությունը ծածկում է քաղաքացիական հասարակության գործունեության և պետական բարեփոխումների շատ կարևոր հատվածը, ԵՀՀ-ն առաջնահերթություն է համարում հասարակության մեջ խթանել քննադատական մտածողության օրակարգը:

Eurasia Partnership Foundation's (EPF) guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many years. EPF unites a team of highly motivated civil society and thought leaders and public figures, who dismantle stereotypes in their daily activities and participate in building the correct development path for Armenia. As a ''think and do tank'', which works the full circle, from policy advice to implementation, and whose remit covers a very significant part of civil society and state reform, EPF considers it a priority to boost the critical thinking agenda in Armenia.

Guide for Policy Paper Development /Armen Grigoryan

Eurasia Partnership Foundation, 2022, 56 pages

Edited by: Azniv Naslyan

Proofreader: Angela Avagyan

Layout and cover design by: Lusine Davtyan

The guide has been developed by Doctor of Juridical Sciences Armen Grigoryan within the framework of the Data for Accountable and Transparent Action Programme (DATA) funded through the United States Agency for International Development (USAID).

The content of the material and ideas expressed are the sole responsibility of Armen Grigoryan and do not necessarily reflect the views of Eurasia Partnership Foundation, USAID or the United States Government.

This publication is a part of the series of manuals published under the "EPF University" heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts, which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

©Eurasia Partnership Foundation, 2022

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

GUIDE FOR POLICY PAPER DEVELOPMENT

Չափսը. 16.5X24

Թուղթը. օֆսեթ 80 գ

Տառատեսակը. Arial

Ուրախ կլինենք ստանալ ձեր կարծիքը
ուղեցույցի վերաբերյալ հետևյալ էլ. հասցեով

info-epf@epfound.am

Please send your comments / feedback to

info-epf@epfound.am

Ուղեցույցը հնարավոր է ներբեռնել հետևյալ հղմամբ.

The Guide can be downloaded via this link:

https://epfarmenia.am/hy/documents/guide-for-policy-paper-development